ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 գնման պայմանագրում 2023 թվականի օգոստոսի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ Կառավարության 16.06.2023թ. N 980-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 պայմանագրի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը լրացնել նոր վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5
16.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 գնման պայմանագրի

ք. Երևան «10» 08 2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Է. Քոչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 16.06.2023թ. N 980-Ն որոշումը և ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 16.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին հաստատել 2023 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027639
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ
ՀՀ ԼՄ ք. Վանաձոր, Վարդանանց 17-5
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
Հ/Հ 2051422103891001
ՀՎՀՀ 06933586

Տնօրեն՝

_____ Է. Քոչարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված
16.10.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 գնման պայմանագրի
10 . 08 .2023թ. կնքված N 5 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2022թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/158	ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	2 200 000	-	-	-	-	-	-	-	6 600 000	6 600 000	6 600 000	6 600 000	6 600 000	6 600 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027639
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ
ՀՀ ԼՄ ք. Վանաձոր, Վարդանանց 17-5
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
Հ/Հ 2051422103891001
ՀՎՀՀ 06933586

Տնօրեն՝

_____ Է. Քոչարյան
(ստորագրություն)

Կ.Տ.